Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

ՄԱԱԶԿ-ն աջակցում է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի էլեկտրական տրամաչափման կարողությունների զարգացմանը

Երևան, Հայաստան – 2025 թ. հունիսի 16- 20 – ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագրի շրջանակում հնգօրյա վերապատրաստում կազմակերպեց Ստանդարտների և չափագիտության ազգային մարմնի (ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ) աշխատակիցների համար՝ ուղղված ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի էլեկտրական տրամաչափման լաբորատորիայի տեխնիկական կարողությունների զարգացմանը:

Էլեկտրական տրամաչափման լաբորատորիայում ներքին աուդիտի վերաբերյալ անցկացված դասընթացի նպատակն էր բարելավել որակի կառավարման համակարգերը և նախապատրաստել լաբորատորիայի միջազգային հավատարմագրմանը՝ ISO/IEC 17025 ստանդարտի պահանջներին համապատասխան:

Հնգօրյա դասընթացի ընթացքում միջազգային փորձագետի աջակցությամբ իրականացվեց մոդելային աուդիտ՝ մասնակիցներին հնարավորություն ընձեռնելով գնահատել ընթացիկ լաբորատոր գործընթացները, վեր հանել բացթողումները և ուրվագծել բարելավմանն ուղղված քայլերը:

Վերապատրաստումը կարևոր փուլ է ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի նորաբաց Էլեկտրական տրամաչափման լաբորատորիայի տրամաչափման ծառայությունների միջազգային հավատարմագրման նախապատրաստման ուղղությամբ: Էլեկտրական տրամաչափման լաբորատորիայի կարողությունների ուժեղացումը նպաստում է Հայաստանի չափագիտության և որակի ենթակառուցվածքի համապատասխանեցմանը միջազգային լավագույն չափանիշներին:

«Աջակցություն որակի ենթակառուցվածքին Հայաստանում» ծրագիրն իրականացնում է ՄԱԱԶԿ-ը՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել ԱՐՄՍՏԱՆԴԱՐՏ-ի կարողությունները՝ շահառուներին միջազգայնորեն ընդունելի չափագիտական ծառայություններ մատուցելու համար: Հայաստանի չափագիտության համակարգի իրավական, կառուցվածքային և տեխնիկական կարգավորումների բարելավման միջոցով ծրագիրը նպաստում է համակարգի արդիականացմանը՝ խթանելով տնտեսության դիվերսիֆիկացիան և առևտրի մրցունակության բարձրացումը, ինչը համահունչ է ԵՄ-ի հետ ստորագրված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» (CEPA) Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել՝
Ծրագրի ղեկավար Յոնգ Վուին՝ C.WU@unido.org
Ծրագրի համակարգող Հայաստանում Մանե Թափալցյանին՝ m.tapaltsyan@unido.org